83/118

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

№ 2 Հ. Խ. Ս. Հ. ՍՈՑԱՊԺՈՂԿՈՄԱՏ
ԳՅՈՒՂ. ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ № 2

# ՓՕԿ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

# ՓՕԿ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

# ՓՕԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՐԵՎԱՆ 1927 Թ.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

№ 2 Հ. Խ. Ս. Հ. ՍՈՑԱՊԺՈՂԿՈՄԱՏ
ԳՅՈՒՂ. ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ № 2

331.823 334.7

# ՓՈԿ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

# ՓՈԿ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

# ՓՈԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՐԵՎԱՆ 1927 Թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3008
ԳՐԱՌ 169 Բ. ՏԻՐԱԺ 2000

ԱԶԳԱՅԻՆ
ԶԱՍԱՐ
11-23988 գր

# ՎՃՌՈՇՈՒՄ

Ընդունված Հայաստանի փոկ 2–րդ Համագումարի կողմից—«փոխադարձ Օգնության Գյուղացիական Ընկերությունների 2 տարվա տարած աշխատանքների և նրանց հեռանկարների մասին»—ընկ. Խ. Հովսեփյանի արած զեկուցման առթիվ։

(1926 թ. Նոյեմբերի 29)

*Լսելով Կենտփոկի զեկուցումը Փոխադարձ Օգնության Գյուղացիական Ընկերությունների 2 տարվա տարած աշխատանքների և նրանց հեռանկարների մասին, Հայաստանյան Փոգընկերությունների 2–րդ Համագումարը ընդգծում է, որ Փոխօգկոմները իրենց գործունեությամբ ապացուցել են, որ անշուշտ նրանք իրենցից ներկայացնում են գյուղացիության ինքնագործունեության կարող օղակներ, գյուղի լայն զանգվածներին սոցիալիստական շինարարության ուղիներով մղող և միաժամանակ գյուղի չքավորական և միջակ շերտերի ու նրանց տնտեսությունները ի մի համախմբող օրգաններ և որ հիշյալ ժամանակաշրջանում ղեկավարվելով նույն սկզբունքներով իրենց աշխատանքների ընթացքում նրանք ձեռք են բերել հետևյալ նվաճումները.—*

*1. Հանրապետության բոլոր Փոխադարձ Օգնության Գյուղացիական Կոմիտեները գյուղացիական ընկերությունների վերածելը՝ հենված Փոգ ընկերությունների կանոնադրության վրա.*

*2. Փոխադարձ Օգնության գաղափարի համեմատական ամրացումը գյուղի մասսայի մեջ։*

*3. Գյուղացիության ինքնագործունեության զարգացումը Փոգ աշխատանքներում։*

*4. Փոխօգկոմների և աշխատակիցների ակտիվի աճումը։*

*5. Տեղական Խորհրդային և հասարակական օրգանների կողմից դեպի Փոկերը տածած ուշադրության ուժեղացումը։*

6. Փոխադարձ Ոգնության ուղիներով կարիքավոր գյուղացիության ոգնության թափի ուժեղացումը, ինչպես և ՓՈԿ միջոցներով նրանց տնտեսության աստիճանական ամրացումը:

7. ՓՈԿ նյութական բազայի ուժեղացումը:

8. ՓՈԿ աշխատանքների մասնակի աճումը գյուղի չքավոր տնտեսությունների կոլլեկտիվիզացման և կոոպերացման շրջանում:

9. Գյուղի չքավոր մասսայի ակտիվության աճումը դեպի ՓՈԿ աշխատանքները:

10. Վերջի ՓՈԿ ընտրությունները Գյուղխորհուրդների ընտրություններից անջատ տանելու հանգամանքը առաջ է բերել Փոկերի մեջ վորոշ թարմություն և այդ կազմերի մեջ անհրաժեշտ քանակությամբ չքավոր և միջակ խավերի ընդգրկումը բարձրացրել է Փոկերի հեղինակությունը գյուղի մասսաների աչքում:

Նշելով այդ նվաճումները, Համագումարը գտնում է, Կենտփոկի ղեկավարման գիծը ճիշտ և տարած աշխատանքները բավարար:

Ընդգծելով ՓՈԿ աշխատանքների ընթացքում ձեռք բերված հիշյալ հաջողությունները Համագումարը վորպես հերթական խնդիրներ առաջարկում է հետևյալը:

## 1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

1. Ընդգծելով մի շարք վայրերի Փոկերում անհատական—կամավոր անդամագրության գոյությունը, վորպիսի հանգամանքը հակառակ է գործող Փոխոգնության կանոնադրության վոգուն և վոր գլխավորն է, անդամագրության նման ձևը չեզոքացնում է Փոխադարձ Ոգնության Կոմիտեների նպատակների առանցքը կազմող կոլլեկտիվիստական ուժը, Համագումարը գտնում է անհրաժեշտ կարճ ժամանակում, անհատական—կամավոր սկզբունքներով կազմված Փոկերը, լայն կամպանիաների, ժողովների, կոնֆերանսների, ինչպես և մամուլի միջոցով վերափոխել՝ կոլլեկտիվ կամավոր անդամագրության, պարզաբանելով գյուղացիությանը այդ ձևի անդամագրության առավելությունները:

2. Մինչև որս դեռ վորոշ վայրերում գոյություն ունեն միացյալ Փոխոգկոմներ, վորպիսի հանգամանքը թույլ չի տալիս յուրաքանչյուր գյուղի աշխատավոր մասսային ակտիվ մասնակցություն ունենալու յուր գյուղի հասարակական աշխատանքներին,



ինչպես և անմիջականորեն կապվել ՓՈԿ տարբեր աշխատանքների հետ: Համագումարը առաջարկում է համապատասխան Փոգ որգաններին՝ տանել նման Փոկերի առանձնացման աշխատանքների հատուկ կամպանիա, վերակազմել կարճ ժամանակում յուրաքանչյուր գյուղում ՓՈԿ միավոր որգաններ, այնտեղ ուր տվյալ գյուղի բնակչության քանակը պակաս չէ 50 ծխից, կամ թե գյուղի Փոգ. Ընկ. անդամ հանդիսացողների թիվը պակաս չէ 20-ից:

Ծանոթություն.—ա) Այդ թվից պակաս անդամ կամ ազգաբնակչություն ունեցող վայրերը, իրենց համայնքների ցանկությամբ կարող են միանալ և կազմել միացյալ Փոկեր:

3. Չնայած վոր անդամավճարների սահմանման և գանձման կարգի ու չափի մասին ժամանակին Կենտփոկի կողմից արված է յեղել դիրեկտիվներ—ամենուրեք միաձև վարելու նման աշխատանքները, այնուամենայնիվ մի շարք վայրերում անդամավճարների սահմանման առթիվ գոյություն ունեցող կարգն ու ձևը յենթարկվել է աղավաղման և խանգարել միասնականության քաղաքականությանը:

Համագումարը առաջարկում է տեղերին լուրջ հետևել Կենտփոկի հրահանգներին և յուրաքանչյուր վայրի, կամ գյուղի Փոգ Ընկերության անդամների անդամավճարների կարգը և չափը վորոշելիս հետևել վորպեսզի.—

ա) Անդամավճարների կարգը և չափը սահմանվի՝ անպայման յելնելով տվյալ Փոկի անդամի տնտեսական դրությունից:

բ) Անդամավճարների կարգն ու չափը սահմանվի ՓՈԳ անդամների ընդհանուր ժողովներում և վոր գլխավորն է՝ նրանց գործնական մասնակցությամբ, համաձայն Կենտփոկի պայմանավորված հիմունքներով:

գ) Անդամավճարների գանձման համար վորոշվեն ստույգ ժամկետներ և անդամավճարները գանձվեն ժամանակին, ըստ Ընկերության ընդհանուր ժողովների կոնկրետ ցուցմունքների:

4. Նկատի ունենալով, վոր մի շարք Գավ. և Շրջ. Փոկեր ձգտում են ունենալ իրենց անմիջական ձեռքի տակ արտադրական և այլ ձեռնարկներ և վոր նման յերևույթները հիշյալ վերադաս որգաններից խլում են բավականի ժամանակ ու յեռանդ և արգելք հանդիսանում ստորադաս Փոգ որգանների աշխատանքների վերաբերյալ տանելիք կանոնավոր հսկողության և ուժեղ ղեկավարման հանգամանքներին, գտնել անհրաժեշտ, բոլոր նման ձեռնարկները

կազմակերպել Գյուղխորհրդին կից, վորպեսզի վերադաս օրգանները հանդիսանան հսկող և ղեկավար մարմիններ: Շրջանային և կամ գավառային մաշտաբով գյուղատնտեսության ոժանդակ ձեռնարկներ Փոկերը կարող են կազմակերպել համապատասխան վերադաս Փոգ օրգաններին կից, յեթե նման ձեռնարկները կրում են շրջանային կամ գավառային նշանակություն:

5. Փոխօգկոմների, ինչպես և նրանց կից ընտրված օրգանների գործնական բոլոր աշխատանքները պետք է ընթանան հենված լինելով գյուղի մասսաների ինքնագործունեության վրա: Այդ մասսաների ինքնագործունեության հետագա զարգացման գլխավոր պայմանները հիմնավորվում են. Փոգ օրգանների՝ դեպի գյուղի մասսան ունեցած ուժեղ կապի վրա, իսկ այդ կապը կարելի յե ամրացնել, յեթե Փոխօգնության օրգանները պարբերաբար զեկուցեն իրենց Ընկերության անդամներին ընդհանուր ժողովներում տարված աշխատանքների մասին: Առաջարկված կապը ամրապնդելու և նրան խորապես գործնականացնելու համար, խիստ կարևոր է, վոր ՓՕԿ պրակտիկ և առօրյա աշխատանքների առթիվ կազմված աշխատանքային ծրագիրը քննվի, ստուգվի և հաստատվի Ընկերության ընդհանուր ժողովներում և ՓՕԿ նիստերում:

6. ՓՕԿ աշխատանքների շրջանակը լայնացել է, մինչդեռ ամենուրեք դեռ չի կանոնավորված Փոգ օրգանների հաշվետվության և հաշվապահության աշխատանքները: Անհրաժեշտ է, վորպեսզի Փոկերը կանոնավոր հաշվետման յենթարկեն իրենց միջոցները յելք ու մուտքը ըստ հաշվետման տախտակների: Հաշվետման տախտակները՝ մանավանդ Գյուղփոկերի վերաբերյալ, պետք է լինեն պարզ և մատչելի, ուստի հանձնարարել նորընտիր Կենտփոկի Նախագահությանը, վերանայել ու պարզեցնել այդ տախտակները և ուղարկել տեղերին առաջնորդվելու:

Միաժամանակ Համագումարը դարձնում է տեղերի ուշադրությունը այն խնդրի վրա, վորպեսզի Գավ. և Շրջ. Փոգ օրգանները, տվյալ խնդրում, չհանդիսանան իբր փոխանցող ստանցիաներ, այլ պետք է նրանք ստուգեն, վերամշակեն և կանոնավորեն տեղերից ստացված բոլոր նյութերը և ապա ուղարկեն վերադաս ՓՕԿ օրգաններին, ինչպես և վերջիններից ստացված հրահանգներն ու շրջաբերականները համաձայնեցնեն յուրաքանչյուր տեղի պայմանների հետ և ապա ուղարկեն իրենց ստորադաս օրգաններին գործադրելու և ղեկավարվելու:

7. Փոկերի միջոցների վոչ տնտեսավարի և հաճախ շռայլ գործադրումը, ինչպես և հանդես ՓՕԿ միջոցների նկատված չարաշահությունները ու վատնումները ներկայացնում են իրենցից մեծ չարիք, վորը հիմնովին հարվածում է Փոգ գաղափարը, գցում է նրա հեղինակությունը գյուղի մասսայի աչքից, և քայքայում է ՓՕԿ միջոցները:

Համագումարը առաջարկում է տեղերին, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել կարճ ժամանակում արմատախիլ անելու նման յերևույթները ՓՕԿ կյանքից:

8. Լուրջ ուշադրություն դարձնել վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքների վրա և գործի կանչել նրանց: Միաժամանակ մատնանշել տեղերի Փոգ օրգանների, ինչպես և վերստուգիչ հանձնաժողովներին, վոր տեղերում կատարվող՝ հանդես ՓՕԿ ֆոնդերի չարաշահությունների, ինչպես և միջոցների անտնտեսավար գործադրման պատասխանատվությունը ընկնելու յե այդ օրգանների վրա, յեթե նրանց կողմից ժամանակին առնված չեն յեղել անհրաժեշտ միջոցներ—կանխելու նման յերևույթները: Համագումարը հանձնարարում է Հայփոխօգկենտկոմին մշակել վերստուգիչ հանձնաժողովների համար հատուկ կանոնադրություն և ուղարկել տեղերին ղեկավարվելու:

9. Նշելով տեղերի ՓՕԿ աշխատակիցների նյութական ծանր դրությունը աշխատավարձի ցածր լինելու պատճառով, հանձնարարել Կենտփոկին ուսումնասիրել այդ հարցը և ձեռք առնել գործնական միջոցներ բարելավելու Գյուղ. և Շրջ. աշխատակիցների նյութական դրությունը:

10. Ի նկատի ունենալով, վոր տեղերում կատարվում են հաճախակի փոփոխումներ և նշանակումներ ՓՕԿ աշխատակիցների, վորպիսի հանգամանքը բացասական է անդրադառնում Փոգ աշխատանքների վրա, գտնել անհրաժեշտ, վորպեսզի յուրաքանչյուր նշանակումներ կամ փոփոխումներ կատարվի ՓՕԿ վերադաս օրգանների գիտությամբ և նրա նախնական համաձայնությամբ:

11. Նկատի ունենալով, Փոխօգնության ասպարեզում հմուտ աշխատակիցների զգալի պակասը, վորպիսի հանգամանքը բացասաբար է անդրադառնում ՓՕԿ առօրյա աշխատանքների վրա, հանձնարարել Կենտփոկին զբաղվել այդ հարցով պատրաստելու և վերապատրաստելու տեղերում ՓՕԿ աշխատակիցների կադր կազմակերպելով այդ առթիվ հրահանգչական դասընթացներ:

12. Նշելով հրահանգչական ուժերի սակավությունը, ինչպես Կենտփոկում, նույնպես և Գավփոկերում, նաև այդ Փոկերի ֆի-

նանսական միջոցների խիստ բացակայությունը, վորպիսի հանգամանքը անկասկած բացասաբար ե անդրադառնում ստորադաս որգանների հետ ունենալիք կենդանի կապի և ղեկավարման աշխատանքների վրա, Համագումարը հանձնարարում ե Հայփոխոգկենտկոմին դնել այդ հարցը Բարձրագույն որգաններում, խնդրելով ուժեղացնել գործող ապարատը և հրահանգիչների կադրը կենտրոնում և թե գավառներում, ինչպես և ուժեղացնել այդ որգանների ֆինանսական միջոցները:

13. Հասարակական ցանքսերը և հողամշակության կոլլեկտիվ ձևի աշխատանքները պետք ե դառնան Փոխոգկոմների ուշադրության գլխավոր կենտրոնը նախ՝ վոր Փոխոգկոմներին հատկացրած հողային ֆոնդերի միջոցով հասարակական ցանքսեր կատարելը սկիզբ են դնում գյուղի հողամշակության աշխատանքների կոլլեկտիվ ձևով տանելուն և յերկրորդ՝ վոր հասարակական ձևի հողամշակությունը տանում ե գյուղը դեպի կուլտուրական ձևի հողոգտագործումը և ուժեղացնում ե Փոկերի նյութական բազան, հետևապես՝ բարձրացնում ե գյուղի տնտեսական մակարդակը:

Համագումարը Փոկերի հատուկ ուշադրությունն ե հրավիրում—իրենց՝ Փոկ անդամների աշխատանքային մասնակցությամբ, կուլտուրական մեթոդներով հողամշակությունը օրինակելի դարձնելու խնդրի վրա, նախապես ձեռք բերելով անհրաժեշտ տեսակի ու քանակի նոր ձևի գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ և պարարտանյութեր:

14. Փոխոգկոմների միջոցով գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացնելու և նրանց կայունացնելու նպատակով անհրաժեշտ ե, վորպեսզի Փոխոգկոմները վորոշ կենտրոնական վայրերում կազմակերպեն գյուղատնտեսական գործիքների վարձու և վերանորոգման կայաններ—պետական և հասարակական որգանների մասնակցությամբ և աջակցությամբ:

15. Խոշոր նշանակություն տալով ՓՈԿ ֆոնդային միջոցների նպատակին ոգտագործման հանգամանքին, վորը քանիցս ընդգծվել ե Կենտփոկի պլենումների վորոշումներում, Համագումարը գտնում ե անհրաժեշտ հանձնարարել Հայփոխոգկենտկոմին վերանայել ՓՈԿ ֆոնդային միջոցների գործադրման տոկոսային ստորաբաժանումների կարգը և այն՝ առաջարկել տեղերին ի ղեկավարություն:

16. Փոխադարձ Ոգնության Ընկերությունների կազմակերպված շատ ձեռնարկներ յեղել են թույլ և վնասաբեր, վորի պատճառով նրանք ժամանակի ընթացքում դադարել են գործելուց, ջլատելով ՓՈԿ միջոցները, հետևաբար և հիասթափում են առաջ բերել Փոդ անդամների շարքերում:

Փոխադարձ Ոգնության Կոմիտեների արտադրողական ձեռնարկները պետք ե կազմակերպվեն միմիայն տնտեսական ինքնամատակարարման հիմունքներով և անշուշտ ապահովեն ՓՈԿ բաժանեկիցները՝ կապված լինեն գյուղական տնտեսության հետ և հանդիսանան նրան ոժանդակ ձեռնարկներ:

17. Արձանագրելով ՓՈԿ առևտրական թեքումների դեմ մղած պայքարի հաջողությունները, Համագումարը գտնում ե անհրաժեշտ հետագայում ևս շարունակել տանել այդ պայքարը:

18. Գյուղացիության նյութական դրությունը բարելավելու նպատակով, Փոկերը իրենց գործունեության ընթացքում պարբերաբար աջակցել են դրամական ու մթերային փոխատվություններով, սակայն բաց թողնված գումարների հետ գանձման աշխատանքների թույլ տարվելու հետևանքով, ՓՈԿ ֆոնդային միջոցները մատնվել են աստիճանական քայքայման:

Յելնելով այդ դրությունից, Համագումարը անհրաժեշտ ե գտնում պարտավորեցնել բոլոր նման Փոդ որգաններին ծրագրված հատուկ աշխատանքների միջոցով վերադարձնել հին ապառիկները և հետևել, վոր յուրաքանչյուր տարվա հաշվեհարդարի ընթացքում ՓՈԿ տնտեսական միջոցները լինեն պատրաստ՝ հաջորդ գործառնական տարվա առթիվ ծրագրված խնդիրները գործնականացնելու համար:

## ՈԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19. Վորոշ տեղերում Փոխոգկոմներն իրենց միջոցների զգալի մասը տվել են չքավորության անվերադարձ նպաստների ձևով, տալով այդ սիստեմին խրոնիկ բնույթ, վորպիսի հանգամանքն անշուշտ ջլատում ե ՓՈԿ տնտեսական հնարավորությունները:

Համագումարը տեղերի ուշադրությունն ե հրավիրում այդ հանգամանքի վրա և առաջարկում անվերադարձ ձևի նպաստավորումը հասցնել մինիմումի:

20. Աշխատանքային ձևի ոգնությունը տարված ե մինչև այժմ անբավարար: Այդ ոգնությունը յեղել ե անկազմակերպ և կրել ե պատահական բնույթ: Յելնելով այդ դրությունից Համագումարը գտնում ե անհրաժեշտ՝

ա) ամենուրեք ուժեղացնել աշխատանքային օգնությունը դաշտային և հասարակական շինարարական ասպարեզներում՝ ՓՕԿ ընկերության անդամների աշխատանքային ինքնօգնության միջոցներով․

բ) ընկերության անդամների միջոցով աշխատանքային օգնություն կազմակերպելիս հաշվի առնել չքավոր անդամների ու բատրակների աշխատանքներին մասնակցելու ձևերն այն նպատակով, որ նրանք ուղղակի կամ անուղղակի միջոցով զերծ լինեն շահագործման հնարավորություններից։

21․ ՓՕԿ անդամների իրավական շահերի պաշտպանման խնդիրն ուժեղ տեղ պետք է բռնի ՓՕԿ առօրյա աշխատանքների մեջ, մանավանդ կարմիր բանակայինների ընտանիքների և չքավորների վերաբերյալ։ Իրավական շահերի պաշտպանման միջոցներն են.—

ա) ընկերության յուրաքանչյուր անդամի կարիքի ժամանակ տալ զանազան խորհուրդներ և տեղեկանքներ բանավոր կամ գրավոր կերպով։

բ) կազմել զանազան դիմումներ և խնդիրներ ՓՕԿ անդամների համար ու հետևել, որպեսզի նրանք ստանան իրենց իրավացի ու գործնական լուծումը․

գ) Պաշտպանել ՓՕԿ ընկերության անդամների շահերը դատարաններում, հողային ու հարկային հանձնաժողովներում, ինչպես և այլ օրգաններում․

դ) զեկուցումների և դասախոսությունների միջոցով պարզաբանել ու ծանոթացնել ՓՕԿ ընկերության անդամներին պետական գործող օրենքների հետ, ինչպես և իրավագիտական այս կամ այն խնդիրների հետ՝ անհրաժեշտ դեպքերում նաև հրավիրել մասնագետներ։

## 4․ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ․

22․ Արձանագրելով չքավոր տնտեսությունների կոոպերացման յենթարկելու աշխատանքների ասպարեզում տարած փոքր նվաճումները, Համագումարը դարձնում է տեղերի ՓՕԿ օրգանների ուշադրությունը, հետագայում այդ աշխատանքների ավելի ուժեղացման վրա, օգտագործելով իրենց տարեկան յեկամուտի 20%-ը, բոլոր ձևերի (վարկային, գյուղատնտեսական, սպառողական) կոոպերացումների ասպարեզներում։

23․ Կոոպերատիվ ասպարեզում ձեռք բերված նվաճումները



խորացնելու, այլ և փոխադարձ կապը ԿՈՈՊ, ՓՕԿ և վարկային օրգանների միջև ամրացնելու նպատակով անհրաժեշտ է փոխադարձ ներկայացուցչական սիստեմի իրական կիրառումը, որը պայմանավորվելու յե գործնական խորհուրդներով և տնտեսական միջոցների փոխադարձ հատկացումներով։

24․ Հաշմանդամների կոոպերացման աշխատանքների մեջ Փոկերն ունեն հատուկ դեր և նշանակություն։ Կոոպերացման առաջին միջոցները պետք է լինեն հաշմանդամների աշխատանքային արտելները, որոնք իրենցից ներկայացնում են կայուն և առողջ ուժեր հաշմանդամների օգնության և նրանց կոոպերացման ասպարեզներում։ Փոխօգկոմներն այդ ուղղությամբ պետք է միջոցներ ձեռք առնեն գործնականապես խորացնելու հիշյալ աշխատանքները։ Նման արտելների կազմակերպումն ու հաշմանդամներին նրանց շուրջ համախմբումը զարկ կտա հաշմանդամների օգնության գործնեյությանը և կը թեթևացնի Փոկերին առանց այն էլ ծանրաբեռնված բյուջեն։

## ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ

25․ Նշելով ՓՕԳ գաղափարի մասսայացման թույլ աշխատանքները, Համագումարը գտնում է անհրաժեշտ որպեսզի ՓՕԿ օրգաններն իրենց գաղափարի տարածման և լուսաբանման ինչպես և կուլտ-կրթական մնացած ձևերի աշխատանքների ժամանակ, սերտ կապ ունենան գյուղի համապատասխան օրգանների հետ։ Միաժամանակ անհրաժեշտ է, որպեսզի վերջինները իրենց առօրյա աշխատանքների ընթացքում հատուկ տեղ տան Գյուղփոխօգնությանը վերաբերյալ խնդիրներին և իրենց ագիտ-պրոպ աշխատանքների ժամանակ լուսաբանեն գյուղի մասսաներին Փոխօգնության դերն ու նրա քաղաքական-հասարակական նշանակությունը գյուղական կյանքում։

26․ Տեղական և կենտրոնական մամուլում ՓՕԿ աշխատանքների ու նրանց առաջադրված խնդիրների լուսաբանումը տարված է թույլ։ Անհրաժեշտ է՝ որպեսզի ՓՕԿ բոլոր օրգանները հատուկ ուշադրություն դարձնեն այդ խնդիրների վրա՝ ուժեղացնել իրենց կապը մամուլի գլխավորապես «Մաճկալ» թերթի հետ և նրանց միջոցով կատարել ձեռք բերված փորձերի ու մտքերի փոխանակություններ։ Իր հերթին Փոխօգկոմները պետք է աշխատեն տարածել գյուղական մասսաների մեջ գոյություն ունեցող թերթերն ու պարբերականները։ Միաժամանակ ի նկատի ունենալով Փոխ–

ոգկոմների հատուկ օրգան ունենալու անհրաժեշտությունը, հա-մագումարը հանձնարարում է Փոխոգկենտկոմին ուսումնասիրել այդ հարցը և հնարավորության դեպքում հրատարակել Փոկերի պարբերական ամսաթերթ և մատչելի գրականություն՝ հատկա-ցրած ՓՈԿ խնդիրներին:

## 6. ԼԿՑԵՄ ՈՒ ՓՈԽՈԳԿՈՄՆԵՐԸ.

27. Նշելով գյուղի յերիտասարդության նվազագույն թվի մասնակցությունը ՓՈԿ աշխատանքների մեջ և ԼԿՑԵՄ օրգանների հետ Փոկերի թույլ կապը, համագումարը գտնում է անհրաժեշտ ամուր շաղկապել տեղերի ՓՈԿ աշխատանքները ԼԿՑԵՄ կազմա-կերպությունների հետ՝ հրավիրելով վերջինների ուշադրությունը դեպի ՓՈԿ խնդիրները, ուժեղացնել նրանց գործնական դերը ՓՈԿ կազմակերպություններում և վոր կարևորն է, գյուղի յերիտա-սարդության ակտիվ անդամներին քաշել ՓՈԿ կազմի մեջ:

## 7. ԱՇԽԱՏԱՆՔ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

28. Վորպեսզի կարելի լինի ապահովել գեղջկուհու առաջ քա-շումը ՓՈԿ կազմերի մեջ և կապել նրան ՓՈԿ առօրյա աշխատանք-ներին՝ անհրաժեշտ է ապահովել և ամրացնել Փոկերի ձեռքի տակ յեղած հնարավոր միջոցները, ներս բերելու գյուղի ակտիվ և գործունյա կանանց ՓՈԿ կազմերի մեջ և աստիճանաբար ավելա-ցնել նրանց թիվը ՓՈԿ ղեկավար օրգաններում.

բ) Գեղջկուհու կենցաղը բարելավելու և նրա ինքնուրույնու-թյունն ուժեղացնելու նպատակով, համախմբել նրանց ՓՈԿ ձեռ-նարկությունների և արտելների շուրջը, ըստ վորի աշխատանքի բաշխման ժամանակ անհրաժեշտ տոկոս հատկացնել այդպիսի-ներին՝ ըստ նրանց ընդունակությունների ու մասնագիտության.

գ) աշխատանքային օգնություն կազմակերպելիս՝ առաջին հերթին օգնության գալ միայն կանանց և հոգալ նրանց յերեխա-ների ուսման ու սննդի խնդիրները.

դ) գավառային և շրջանային ՓՈԿ կազմերի մեջ առնել տե-ղերի կին կազմակերպությունների ներկայացուցիչներին և ուժե-ղացնել տեղերում այդ յերկու օրգանների փոխհարաբերություն-ները.

ե) Բոլոր միջոցները գործ դնել, վորպեսզի գեղջկուհին մաս-նակցի ընկերության ժողովներին և գործնական վերաբերմունք ցույց տա դեպի հասարակական-տնտեսաշինարարական աշխա-տանքները:



## 8. ԱՆԱՊԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓՈԽՈԳԿՈՄՆԵՐԸ.

Համարելով անապաստանության դեմ մղվող պայքարը խոշոր հրատապ խնդիր, վորն իր հերթին ներկայացնում է ՓՈԿ աշխա-տանքների ամենակարևոր մասը, Փոկերը չպետք է բավականանան այդ պայքարի մասնակցությանը ձևական բնույթ տալուն այն է անապաստանության դեմ կռվող հանձնաժողովներին ներկա-յացուցիչներ տալու և այլն: Փոկերը պետք է ամենաակտիվ և գործնական մասնակցություն հայտնաբերեն այդ հանձնաժողովի աշխատանքներին:

Համագումարը հանձնարարում է Հայկենտփոկին մշակել ան-հրաժեշտ ցուցմունքներ ու հրահանգներ անապաստանության դեմ տարվելիք ՓՈԿ աշխատանքների համար, համաձայնեցնել այն կենտրոնական համապատասխան օրգանների հետ և տալ տեղերին գործնական դիրեկտիվներ իրականացնելու:

## 9. ՓՈԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ.

30. Ի նկատի ունենալով, վոր Փոխադարձ Օգնության Ընկե-րությունների կանոնադրությունը հրատարակված է 1924 թ. վերջում և վոր այդ ժամանակամիջոցում Փոխոգկոմների պրակ-տիկ աշխատանքներն առաջ են բերել նոր խնդիրներ, վորի պատ-ճառով հիշյալ կանոնադրությունը կարիք է զգում անհրաժեշտ փո-փոխումների ու լրացումների, Համագումարը հանձնարարում է Հայփոխոգկենտկոմին տանել այդ առթիվ նախապատրաստական աշխատանքներ և տեղերի անհրաժեշտ կարծիքը ստանալուց ու կենտփոկի միջոցով այդ կարծիքները ձևակերպելուց հետո՝ փո-խադրել հարցը մոտակայում հրավիրվելիք Հայփոխոգկենտկոմի 2-րդ պլենումին:

[redacted]

# ՀՐԱՀԱՆԳ

## ՆԵՐՔԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ, ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ, ՍՈՑԱՊԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ՓՈԽՕԳԿԵՆՏԿՈՄՆԵՐԻ

Գավառակային Գործկոմների ու գյուղխորհուրդների և փոխադարձ օգնության գյուղական ընկերությունների գավառակային ու գյուղական կոմիտեների փոխհարաբերությունների մասին Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմի նախագահության 1927 թ. փետրվարի 23-ի վորոշման հիման վրա հրատարակվում է այս հրահանգը.

*Համաձայն Խորհուրդների գավառակային համագումարների և գավառակային Գործադիր Կոմիտեների կանոնադրության 24-րդ հոդ. «գ» կետի և գյուղական խորհուրդների կանոնադրության 13-րդ հոդ. «ա» կետի, նաեվ Փոխադարձ Օգնության Գյուղացիական Ընկերությունների կանոնադրության 7,8,20 և 21 հոդվածների, այլ և ցանկալով ճշտել ու կանոնավորել գավառակային Գործկոմների և գյուղխորհուրդների փոխհարաբերությունները՝ Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերությունների գավառակային և գյուղական կոմիտեների հետ, Ներքգործժողկոմատը, Արդժողկոմատը, և Սոցապժողկոմատ—Փոխօգկենտկոմն առաջարկում են այդպիսիներին իրենց գործունեության ընթացքում առաջնորդվել հետեվյալ կանոններով.—*

*1. Փոխադարձ Օգնության Գյուղացիական Ընկերությունները (ՓՕԳ Ընկերությունները), վորոնք կոչված են նպաստելու Խորհրդային Իշխանության քաղաքականությանը՝ գյուղում Խորհրդային հասարակականության կազմակերպելու գործում, հանդիսանում են գյուղի անհրաժեշտ հասարակական կազմակերպություններից մեկը: Այդ պատճառով գավառակային գործկոմները և Գյուղխորհուրդները պետք է ուժեղացնեն իրենց ուշադրությունը դեպի ՓՕԳ Ընկերությունները և նրանց կոմիտեները,*



*ցույց տալով վերջիններին գործնական օգնություն իրենց վրա դրված պարտականությունները կատարելու, նկատի ունենալով, վոր ՓՕԳ Ընկերությունները կարող են հաջողությամբ իրագործել իրենց խնդիրները միայն այն պայմաններում յեթե նրանց և գավառակային գործկոմների ու Գյուղխորհուրդների փոխհարաբերությունները ճշտված լինեն, և վերջինները մեծ ուշադրությամբ վերաբերվեն դեպի ՓՕԳ Ընկերությունների օրգանները:*

*2. Գավառակային Գործկոմները և Գյուղխորհուրդները, ինչպես ընդհանուր կանոն, չպետք է միջամտեն ՓՕԳ Ընկերությունների ընթացիկ, օպերատիվ աշխատանքներին:*

*3. ՓՕԳ Ընկերություններն իրենց դրամական և մթերային միջոցները տնօրինում ու գործադրում են անմիջականորեն և գավառակային գործկոմներից ու Գյուղխորհուրդներից անկախ: Գավառակային Գործկոմների ու Գյուղխորհուրդների կողմից ՓՕԳ Ընկերությունների ֆոնդերի ինքնագլուխ օգտագործումը համարվում է անթույլատրելի և քրեական պատասխանատվության յենթակա:*

*4. Գավառակային Գործկոմներն ու Գյուղխորհուրդները պարտավոր են ՓՕԳ Ընկերություններին և նրանց կոմիտեներին հետեվյալ ձևերի օժանդակություն ցույց տալ:*

*ա) Առանց վարձատրության տրամադրել իրենց տեխնիկական ապարատը ՓՕԳ Ընկերությունների կարիքներին, աջակցելով, վորպեսզի գործավարությունը և հաշվետվությունը լինեն կանոնավոր, խուսափելով իրենց և ՓՕԳ Ընկերությունների գործավարության և հաշվետվության լիակատար ձուլումից.*

*բ) Կարիքավոր գյուղացիությանը ամեն տեսակ պետական և հասարակական օգնություն ցույց տալ ՓՕԳ Ընկերությունների միջոցով.*

*գ) Աջակցել, վորպեսզի ՓՕԳ Ընկերությունների նյութական ու մթերային միջոցներն ամրապնդվեն ու զարգանան և ՓՕԳ Ընկերությունների օրգաններին լայն հնարավորություն տալ արտոնյալ պայմաններով ու վարձակալական կարգով օգտագործելու զանազան ձեռնարկություններ, կատարելու փոխադրություններ, հոյթհայթումներ, մթերումներ և այլն.*

*դ) Անհրաժեշտ դեպքում պաշտպանել ՓՕԳ Ընկերությունների միջնորդությունները համապատասխան հողօրգանների առաջ՝ տրամադրելու նրանց հողամասեր հասարակական վար ու ցանքի համար, ինչպես նաեվ ձեռք առնել բոլոր միջոցները ՓՕԳ*

ընկերություններին հասարակական ֆոնդերից հողամասեր հատկացնելու համաձայն գործող օրենքների.

ե) Ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ հայտնաբերելու և ՓՈԳ ընկերություններին հանձնելու գյուղացիական տնտեսությունների լքյալ գույքերը, որոնք համաձայն գործող օրենսդրության պետք է հանձնվեն ՓՈԳ ընկերություններին:

զ) Անհրաժեշտ դեպքերում պաշտպանել ՓՈԳ ընկերությունների տնտեսական և իրավական շահերը պետական, հասարակական և այլ կազմակերպություններում և այլն:

5. Ամեն կերպ աջակցելով ՓՈԳ ընկերություններին, գավառակային գործկոմները և Գյուղխորհուրդները հսկում են, որպեսզի՝

ա) ՓՈԳ ընկերությունների միջոցները գործադրվեն ՓՈԳ ընկերությունների վերադաս օրգանների հաստատած ծրագրի համեմատ, ՓՈԳ ընկերությունների ընդհանուր ժողովների որոշումների համաձայն, և բացառապես այնպիսի կարիքների վրա, որոնք նախատեսված են ՓՈԳ ընկերությունների կանոնադրությամբ.

բ) ՓՈԳ ընկերությունների աշխատանքներում չնկատվեն առևտրական և այլ վնասակար տնտեսական թեքումներ (օրինակ՝ առևտրական գործնեյությամբ պարապելը, իրենց հատկացված հողամասերի կապալային-վաշխառուական ձևերով օգտագործումը և այլն).

գ) ՓՈԳ ընկերությունների ապարատի պահպանման ծախսերը սահմանված նորմայից չանցնեն.

դ) Ընդհանուր առմամբ ՓՈԳ ընկերությունների աշխատանքներն ընթանան ՓՈԳ ընկերության կանոնադրության, գործող օրենքների և նրանցից բղխող շրջաբերական-հրահանգների սահմաններում և այլն:

6. Եթե Գյուղխորհուրդները և գավառակային գործկոմները ՓՈԳ ընկերությունների գավառակային ու գյուղական աշխատանքների ընթացքում նկատում են որոշ թերություններ և խախտումներ, նրանք իրենց կողմից ձեռք են առնում անհրաժեշտ միջոցներ վերացնելու այդ թերությունները, համաձայնեցնելով իրենց կարծիքը տվյալ ՓՈԳ ընկերության օրգանի հետ, իսկ չհամաձայնվելու դեպքում իրենց դիտողություններն ուղղում են ՓՈԳ ընկերության վերադաս օրգանին նրա կողմից համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:



7. Գավառակային Գործկոմների և Գյուղխորհուրդների մշտական և փոխադարձ կապը ՓՈԳ ընկերությունների հետ իրականացնելու համար անհրաժեշտ է.—

ա) Պարբերաբար լսել ՓՈԳ ընկերությունների գործունեյության վերաբերյալ զեկուցումներ, գավառակային գործկոմների և Գյուղխորհուրդների նիստերում (առնվազն յերեք ամիսը մեկ անգամ).

բ) ՓՈԳ ընկերությունների ներկայացուցիչներին հրավիրել մասնակցելու գավառակային գործկոմների և գյուղական խորհուրդների բոլոր խորհրդակցություններին և նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Գավառակային գործկոմների և գյուղխորհուրդների ներկայացուցիչների միջոցով մասնակցել ՓՈԳ ընկերությունների նիստերին ու խորհրդակցություններին, խորհրդակցական ձայնի իրավունքով.

դ) ՓՈԳ ընկերությունների տնտեսական և կուլտուր-կրթական շինարարական աշխատանքների ծրագիրը նախօրոք համաձայնեցնել գյուղխորհուրդների և գավառակային գործկոմների համապատասխան սեկցիաների հետ:

8. Թույլ չի տրվում, որպեսզի ՓՈԳ ընկերությունների և խորհրդային ու հասարակական աշխատանքների ղեկավարությունն իրագործվի մի անձի միջոցով:

Ներքին Գործերի Ժողովրդական կոմիսար՝
Ա. ԲԵՐԲԵՐՅԱՆ

Ի տեղի Արդարադատության Ժողովրդական
կոմիսարի՝ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Սոցիալական Ապահովության Ժողովրդական
կոմիսար և Փոխդկենտկոմի նախագահ՝
Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ

[redacted]

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Փոխ. Օգնության գյուղացիական ընկերությունների վերստուգիչ հանձնաժողովի

*Հաստատված ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահության կողմից 1927 թ. մարտի 23 ին։*

1. Փոխադարձ Օգնության Գյուղացիական Ընկերությունների կանոնադրության 27 և 28 հոդվածների հիման վրա (Օրենք. և Կարգ. Ժող. 1926 թ. № 5 հոդ. 48) Փոխադարձ Օգնության Գյուղացիական (ՓՕԳ) Ընկերությունների կոմիտեներին կից կազմվում են վերստուգիչ հանձնաժողովներ։

2. Վերստուգիչ Հանձնաժողովը ՓՕԳ Ընկերությունների ֆինանսական-տնտեսական գործունեության հասարակական վերահսկողության մարմինն է և ընտրվում է ՓՕԳ Ընկերությունների ընդհանուր ժողովներում գյուղական կոմիտեի հետ միաժամանակ և միևնույն կարգով, որը սահմանված է ՓՕԳ Ընկերությունների գյուղական կոմիտեների ընտրության համաձայն։

3. Վերստուգիչ Հանձնաժողովն ընտրվում է մեկ տարի ժամանակով, յերեք անդամի և յերկու փոխանդամի կազմով։ Վերստուգիչ Հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք վայելող ամեն մի քաղաքացի։

Ծանոթ.—Վերստուգիչ Հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել համապատասխան ՓՕԳ Ընկերության կոմիտեի անդամներն ու փոխանդամները, այլև տվյալ Վերստուգիչ Հանձնաժողովի վերահսկողության յենթակա հիմնարկությունների պաշտոնյաները։

4. Վերստուգիչ Հանձնաժողովն իր միջից ընտրում է Վերստուգիչ Հանձնաժողովի մշտական նախագահ և քարտուղար։

5. Վերստուգիչ Հանձնաժողովն առանձին տեխնիքական ապարատ չունի և հարկավոր յեղած դեպքերում իր գործունեության համար օգտվում է ՓՕԳ Ընկերության գյուղկոմի ապարատից։



6. Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները կարող են հեռացվել իրենց գործից ընկերության անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, իսկ մինչև ընդհանուր ժողով գումարելը՝ ՓՕԳ Ընկերության գավառական կոմիտեի վորոշմամբ, գավառական կոմիտեի առաջարկությամբ ա) իրենց պարտականություններին ակնհայտնի անփութությամբ վերաբերվելու դեպքերում և բ) վերստուգումների ժամանակ չարաշահություններ թույլ տալու դեպքերում։

Ծանոթ.—Վերստուգիչ Հանձնաժողովի ամեն մի հեռացող անդամին փոխարինում է փոխանդամը։

7. Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքի համար վոչ մի վարձատրություն չեն ստանում։

8. Վերստուգիչ Հանձնաժողովն ա) ստուգում է դրամական միջոցներ ստանալու, պահելու և ծախսելու կանոնավորությունը, այլև վերահսկողություն ունի ՓՕԳ Ընկերության գյուղկոմի կայքի ու գույքի վրա, հողագործական գործիքների, ինվենտարի, այլև նրանց պիտանիության, նրանց նպատակահարմար և կանոնավոր պահելու համար ու օգտագործելու վրա և այլն. բ) ստուգում է ՓՕԳ Ընկերության գյուղկոմի դրամական և նյութական հաշվետվությունը և նրա իրավասության տակ գտնվող ձեռնարկությունների ֆինանսական տնտեսական գործունեությունը. գ) ստուգում է գյուղկոմի տեսչության տակ գտնվող ձեռնարկությունների գործունեությունը, այլև պարզում է, թե ինչպես է գործը դրված այդ ձեռնարկություններում, և նշում է գործը բարելավելու միջոցներ. դ) սահմանված կարգով ստուգում է անդամավճարների և այլ տուրքերի գանձումը և հանգանակված գումարները ծախսելու կարևորությունն ու հաշիվ է տալիս այդ մասին ՓՕԳ Ընկերությունների ընդհանուր ժողովին։

9. Յեթե Վերստուգիչ Հանձնաժողովը յերևան հանի, վոր դրամ է վատնված, ապօրինի ու անկանոն ծախս է արված, կամ այլ զեղծումներ են տեղի ունեցել, այդ մասին պիտի հայտնի ՓՕԳ Ընկերության գավառական և գյուղական կոմիտեներին, այլև զեկուցանի ՓՕԳ Ընկերության անդամների առաջիկա ընդհանուր ժողովին։

10. Գյուղական Վերստուգիչ Հանձնաժողովը հերթական վերստուգումներ է կատարում առնվազն յերեք ամիսը մեկ անգամ։ Արտակարգ վերստուգումներ տեղի յեն ունենում թե՛ գյուղական

Վերստուգիչ Հանձնաժողովների նախաձեռնությամբ և թե ՓՈԳ Ընկերությունների վերադաս կոմիտեների առաջարկությամբ։

11. Նախորդ հոդվածներում մատնանշված կարգով ՓՈԳ Ընկերության գյուղկոմի գործունեության ստուգումը պիտի կատարվի անպատճառ գյուղկոմի վերընտրությունից մի ամիս առաջ։ Նորընտիր Վերստուգիչ Հանձնաժողովը պարտավոր է ներկա լինել ՓՈԳ Ընկերության նորընտիր գյուղկոմի՝ նախկին գյուղկոմից գործերը, դրամը կամ հաշվը ու գույքը և ձեռնարկությունները ընդունելիս։

12. Գյուղական Վերստուգիչ Հանձնաժողովն իր աշխատանքի մասին հաշիվ է տալիս ընտրողներին ՓՈԳ Ընկերության ընդհանուր ժողովներում, ամեն անգամ, երբ գյուղկոմը զեկուցում է տալիս իր գործունեության մասին։

Ծանոթ.—Գյուղկոմի տեսչության տակ գտնվող հիմնարկությունների վերստուգման արդյունքը Վերստուգիչ Հանձնաժողովը հաղորդում է գավառական կոմիտեյին, այլև պատշաճ դեպքերում՝ ՓՈԳ Ընկերության այն վերադաս կոմիտեյին, որի հանձնարարությամբ վերստուգումը կատարվել է։

13. Վերստուգիչ Հանձնաժողովը վերստուգում կատարելիս պարտավոր է ամեն անգամ արձանագրություն կազմել երեք օրինակից։ Արձանագրության մեջ անհրաժեշտ է, որքան կարելի է մանրամասն մատնանշել, թե ինչ է ստուգվել, ինչ է եղել ստուգման արդյունքը, և թե ինչ է առաջարկվում անել նկատված թերությունները վերացնելու համար։ Արձանագրությունը պետք է ստորագրեն Վերստուգիչ Հանձնաժողովի բոլոր անդամները, որոնք կատարել են վերստուգումը, գյուղկոմի նախագահը, կամ նրա փոխարինող անդամը. արձանագրության մի օրինակը մնում է Վերստուգիչ Հանձնաժողովի գործերում, երկրորդը՝ գյուղկոմի գործերում և երրորդն ուղարկվում է գավառական կոմիտեյին։

14. Վերստուգումը կատարվում է տվյալ հիմնարկությունը կամ նրա ձեռնարկությունը գլխավորող անձանց կամ նրանց փոխարինողների ներկայությամբ։ Եթե Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներից կամ վերստուգմանը ներկա եղողներից մեկը համաձայն չլինի արձանագրությանը, նրան իրավունք է վերապահվում երեք օրվա ընթացքում իր առանձին կարծիքը մտցնելու արձանագրության մեջ։



Ծանոթ.—Եթե վերոհիշյալ անձանց ներկայությունը միանգամայն անհնար լինի, վերստուգումը պիտի կատարվի ընկերության անդամ հանդիսացող երկու ընթերակայի ներկայությամբ։

15. Եթե ՓՈԳ Ընկերության տվյալ գյուղկոմի շրջանում գտնվող հիմնարկությունների վերստուգումը կատարելու լինեն վերադաս վերստուգիչ մարմինները, վերստուգմանը մասնակցելու պետք է հրավիրվի համապատասխան գյուղական Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներից մեկը։

16. Գյուղկոմի՝ Վերստուգիչ Հանձնաժողովի առաջարկություններին համաձայն չլինելու դեպքում տարակարծությունները լուծում է ՓՈԳ Ընկերության գավառական կոմիտեն։

17. Վերստուգիչ Հանձնաժողովը վերստուգում կատարելիս կարող է կանչել բացատրության տալու համար ՓՈԳ Ընկերության գյուղկոմի պաշտոնյաներին, նաև օգտագործել գյուղկոմի բոլոր մատյաններն ու փաստաթղթերը։

Աշխատանքի համապատասխան ճյուղերը հետազոտելիս Վերստուգիչ Հանձնաժողովը կարող է հրավիրել իրեն օգնելու համար գիտակ անձանց (բժիշկների, գյուղատնտեսների, հաշվապահների և այլն) տեղական աշխատակիցներից։

18. Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները կարող են ներկա լինել խորհրդակցական ձայնի իրավունքով համապատասխան գյուղկոմի բոլոր նիստերին։ Վերստուգիչ Հանձնաժողովի նախագահի ներկայությունը գյուղկոմի բոլոր նիստերին պարտադիր է։

19. Գյուղական Վերստուգիչ Հանձնաժողովներին ղեկավարում ու հրահանգում են ՓՈԳ Ընկերությունների վերադաս կոմիտեները։

20. ՓՈԳ Ընկերության գյուղկոմն իրավունք չունի միջամտելու Վերստուգիչ Հանձնաժողովի գործունեությանը և որևէ կարգադրություն անելու նրան։ Սակայն նա կարող է հանձնարարություններ տալ Վերստուգիչ Հանձնաժողովին այս կամ այն աշխատանքի վերստուգման մասին։

21. Վերստուգիչ Հանձնաժողովն իրավունք չունի միջամտելու ՓՈԳ Ընկերության գյուղկոմին,—այլև նրան ենթակա հիմնարկությունների ու ձեռնարկությունների ընթացիկ գործունեությանը։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

50
ՀՀ Ազգային գրադարան
NL0836532

118

11
23986

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.